Հավելված
ՀՀ կառավարության 2013 թ.
հունվարի 31-ի նիստի N 4
արձանագրային որոշման

## ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| հ/հ | Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Կատարողը | Համակատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը | Հղումը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1. | Հանրապետությունում գենդերային իրավիճակի շարժընթացի գնահատման և մշտադիտարկման ցուցանիշների ներդրմանն ուղղված աշխատանքների իրականցում: | <Գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ> մեթոդական ձեռնարկը կտրամադրվի շահագրգիռ գերատեսչություններին և կազմակերպություններին: Կիրականացվեն գենդերային իրավիճակի շարժընթացի գնահատման և մշտադիտարկման ցուցանիշների ներդրմանն ուղղված ուսուցողական դասընթացներ: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | Ընթացքում | Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ | ՀՀ կառավարության 2011թ մայիսի 20-ի նիստի N 19 արձանագ-րային որոշման 3-րդ և 4-րդ կետեր |
| 2. | ՀՀ մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովների անդամների գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանն | Կիրականացվեն <Գենդերային հիմնահարցեր> թեմայով վերապատրաստման դասընթացներ ՀՀ մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | Ընթացքում | Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ուղղված միջոցառումների իրականացում: | գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովների անդամների համար: | | | | | |
| 3. | Պետական ծառայողների որակավորման բարձրացում ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանը: | Կիրականացվեն «Գենդերային հիմնահարցեր» թեմայով քաղաքացիական ծառայողների (բարձրագույն, գլխավոր, առաջատար, կրտսեր պաշտոնների համար) վերապատրաստման դասընթացներ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2008թ. հուլիսի 8-ի N 567-Ա որոշմամբ հաստատված ծրագրով, որի շրջանակում կվերապատրաստվեն բարձրագույն, գլխավոր, առաջատար, կրտսեր պաշտոնների շուրջ 100 քաղաքացիական ծառայողներ: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | Դեկտեմբեր | ՀՀ պետական բյուջե | |
| 4. | ՄԱԿ-ի <Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին> ՀՀ հինգերորդ և վեցերորդ պարբերական զեկույցի ներկայացում ՀՀ Կառավարություն: | Կմշակվի և ՄԱԿ ներկայացնել ՀՀ 5-րդ և 6րդ պարբերական զեկույցը: | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | Միջգերատեսչական աշխատանքային խումբ | Դեկտեմբեր | Ֆինանսավորում չի պահանջվում | |
| 5. | Բնակչության տեղեկատվության բարձրացում կաթնագեղձերի և արգանդի վզիկի քաղցկեղի կանխարգելման հետազոտության | Կմշակվեն կաթնագեղձերի և սեռական օրգանների քաղցկեղի վաղ հայտնաբերման և կանխարգելման | ՀՀ առողջապահության նախարարություն | | Հունիսի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | անհրաժեշտության մասին: | նպատակով տեղեկատվական թերթիկներ: | | | | | |
| 6. | Կանանց վերարտադրողական առողջության բարելավում, ծննդօգնության հաստատությունների աշխատանքի սկզբունքների կանոնակարգում: | Կմշակվեն մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնության կազմակերպման չափորոշիչները, այն թվում բուժհաստատությունների աշխատանքի սկզբունքները, նկարագրերը և կհաստատվեն առողջապահության նախարարի հրամանով: | ՀՀ առողջապահության նախարարություն | | Ապրիլի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում | |
| 7. | Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող <Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության> վարկային ծրագրի շրջանակներում սպառողական կոոպերատիվների կարողությունների հզորացման, արոտների անցանելիության մակարդակի բարձրացման, կաթի հավաքման և վերամշակման կարողությունների ստեղծման միջոցով անասնապահությամբ զբաղվող կին ֆերմերների աշխատանքի արդյունավետության բարձրացում: | Կոոպերատիվի անդամ կանանց աշխատանքի պայմանների բարելավում, գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացում, կանանց եկամուտների ավելացում, աշխատատեղերի ստեղծում: | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | | Ընթացքում | Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 8. | Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող <Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության> վարկային ծրագրի շրջանակներում կանանց մասնակցությամբ կամ ղեկավարությամբ իրականացվող մրցակցային դրամաշնորհային ծրագրերի միջոցով՝ գյուղատնտեսության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրմամբ արտադրության արդյունավետություն բարձրացում և փորձի տարածում: | Գյուղատնտեսության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրում և փորձի տարածում, արտադրության արդյունավետության բարձրացում, կանանց համար աշխատատեղերի ստեղծում, եկամուտների ավելացում, աղքատության կրճատում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | | Ընթացքում | Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ | |
| 9. | Գյուղական բնակավայրերում կանանց աղքատության հաղթահարմանն ուղղված ծրագրերի, մասնավորապես՝ վարկերի մատչելիության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում: | Գյուղական բնակավայրերում կանանց զբաղվածության մակարդակի բարձրացում, կանանց հնարավորությունների նպատակային օգտագործում, եկամուտների ավելացում (<Գյուղական ֆինանսավորման կառույց> ծրագրի իրականացման գրասենյակի (ԳՖԿ ԾԻԳ) միջոցով կիրականացվի գյուղատնտեսության ոլորտում տրամադրված վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորում: Վարկեր կտրամադրվեն գյուղատնտեսությունում տնտեսավարողներին (սերմարտադրություն, | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | | Ընթացքում | Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | հացահատիկային, բանջարաբոստանային մշակաբույսերի, կարտոֆիլի արտադրություն, այգեգործություն, անասնագլխաքանակի մայրական կազմի ձեռքբերում, բուծում, նոր գյուղ.տեխնիկայի ձեռքբերում և այլն) ֆերմերներին՝ ակնկալվում է կին գործարարներին տրամադրել շուրջ 900 միավոր վարկ): | | | | | |
| 10. | <Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցություն> ծրագրի իրականացում: | Ծրագրի շրջանակում աջակցություն կցուցաբերվի 70 կին գործարարի: | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | | Ընթացքում | ՀՀ պետական բյուջե | |
| 11. | <ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն> ծրագրի իրականացում: | Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն կցուցաբերվի շուրջ 1500 կին գործարարի: | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | | Ընթացքում | ՀՀ պետական բյուջե | |
| 12. | Արդյունաբերությունում կանանց համար նոր աշխատատեղերի ստեղծում: | Կստեղծվի կանանց համար շուրջ 330 աշխատատեղ: | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | | Ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում | |
| 13. | Հանրակրթական դպրոցի, Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների, փոխտնօրենների և ուսուցիչների որակավորման բարձրացում՝ ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանը և | Հանրակրթական դպրոցների, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների, փոխտնօրենների և ուսուցիչների վերապատրաստման ծրագրերում կներառվեն | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | Ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | գենդերային զգայունության բարձրացմանը: | գենդերային քաղաքականությանը վերաբերող թեմաներ: | | | | | |
| 14. | Սովորողների մոտ մասնագիտական կողմնորոշման հարցերում իրազեկվածության բարձրացում՝ ուղղված գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը, աղջիկների և տղաների շրջանում իրենց սեռի համար ոչ ավանդական մասնագիտությունների նկատմամբ մոտիվացիայի ձևավորմանը: | Հանրակրթական դպրոցներում կկիրառվի <Դաստիարակչական աշխատանքը դպրոցում. մասնագիտական կողմնորոշման խնդիրներ> օժանդակ ձեռնարկը, դասղեկական ժամերի ընթացքում սովորողները կիրազեկվեն մասնագիտական կողմնորոշման հարցերի շուրջ: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | Ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում | |
| 15. | Ուսումնամեթոդական գրականության գենդերային փորձաքննության իրականացում: | Փորձագիտական խմբերի կողմից կիրականացվի ուսումնամեթոդական գրականության գենդերային փորձաքննություն և գենդերային կարծրատիպեր պարունակող նյութերի վեր հանում/բացառում: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | Ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 16. | Գենդերային հիմնախնդիրնե-րի ներառմամբ ՄԿՈՒ պետա-կան քաղաքականության մեջ: | Կիրականացվեն հետազոտական աշխատանքներ՝ մասնագիտական ՀՀ պետական բյուջեի <Պե-տական աջակցություն ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանմանը> ծրագրի շրջանակներում կողմնո-րոշման հարցերում սովորողների մոտ առկա գենդերային մոտեցումները բա-ցահայտելու, միջազգային փորձը տեղայնացնելու ուղղությամբ: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | Ընթացքում | Ֆինանսավո րում չի պա-հանջվում | |
| 17. | ՀՀ ԱԻՆ պաշտոնական կայքում և <Արտակարգ թերթում> արտակարգ իրավիճակներում գենդերային խնդիրների վերաբերյալ նյութերի տեղադրում և տարածում: | Արտակարգ իրավիճակներում գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվության տարածում, իրազեկվածության բարձրացում: | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | | Ընթացքում | Օրենքով չարգելված այլ ֆինանսա-վորման աղբյուրներ | |
| 18. | <Աղետների ռիսկի նվազեցումը և գենդերային խնդիրները> թեմայով դասընթաց՝ լրագրողների համար: | Աղետների ռիսկի նվազեցման գործընթացում գենդերային խնդիրների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում: | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | | Ընթացքում | Ֆինանսա-վորում չի պահանջվում | |
| 19. | <Կին միջազգային կինոփա-ռատոն>: | Հայաստանում կանանց կողմից նկարահանված ֆիլմերի ավելացում, նոր անունների | ՀՀ մշակույթի նախարարություն | | Նոյեմբեր-դեկտեմբեր | ՀՀ պետական բյուջե | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | բացահայտում: | | | | | |
| 20. | ՀՀ կառավարության սահմանած «Լավագույն համայնքապետ՝ գենդերային ուղղվածությամբ», մրցույթի անցկացում: | Համայնքներում ՀՀ գենդերային ռազմավարության իրականացում | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | Մարտ | Ֆինանսավորում չի պահանջվում | |
| 21. | Գենդերային հիմնախնդիրնե-րի լուսաբանման աշխա-տանքների իրականացում: | Կկազմակերպվեն գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ քննարկումներ, կտարածվեն տեղեկատվական նյութեր, կմշակվեն համապատասխան նյութեր ԶԼՄ-ներում հրապարակման նպատակով: | ՀՀ մարզպետարաններ Երևանի քաղաքապետարան, /համաձայնությամբ/ | | | | |
| 22. | Վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում գենդերային հարցերով զբաղվող աշխատանքային խմբերի աշխատակիցների վերապատրաստում: | Գենդերային իրավիճակի շարժընթացի գնահատում և մշտադիտարկման ապահովում,գենդերային քաղաքականությանն ուղղված աշխատանքների արդյունավետության բարձրացում: | Երևանի քաղաքա-պետարան /համաձայնությամբ/ | | Ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում | |
| 23. | Գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում կանանց մասնակցության հնարավորությունների ընդլայնմանն ուղղված միջոցառումների իրականացում: | Կիրականցվի գյուղական բնակավայրերում կանանց աշխատանքային և կենցաղային պայմանների ուսումնասիրություն, կներկայացվեն առաջարկություններ: | ՀՀ Արմավիրի մարզպետարան | | Ապրիլ-սեպտեմբեր | Ֆինանսավորում չի պահանջվում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 24. | Քաղաքական և հասարակական կյանքում կանանց և տղամարդկանց մասնակցությանն ուղղված միջոցառումների իրականացում: | Կիրականացվի հետազոտություն մարզում քաղաքական և հասարակական կյանքում կանանց և տղամարդկանց մասնակցության վերաբերյալ, կկազմակերպվի սեմինար-խորհրդակցություն հետազոտության արդյունքների ներկայացման և քննարկման համար: | ՀՀ Արարատի մարզպետարան | Մարզում գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով | Մայիս | Ֆինանսավորում չի պահանջվում | |
| 25. | Մարզի համայնքների ծրագրերում գենդերային քաղաքականության ներառման գործընթացի ապահովում: | Մարզի 4 տարածաշրջաններում համայնքապետարաններ ի աշխատակիցների, ավագանու անդամների, ՀԿ-ների ներկայացուցիչների, լրագրողների համար կազմակերպել հանդիպումներ ՀՀ գենդերային քաղաքականության իրազեկման, համայնքային ծրագրերում գենդերային բաղադրիչները ներառելու նպատակով: | ՀՀ Արագածոտնի մարզպետարան | | Մարտ-ապրիլ | Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ | |
| 26. | Կանանց ձեռնակատիրական գործունեության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում: | 40 սկսնակ կին գործարարների համար կկազմակերպվեն սեփական բիզնես պլան կազմելու վերաբերյալ, կտրամադրվեն մեթոդական նյութեր: | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան | Մարզում գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով | Ապրիլ-մայիս | Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 27. | Քաղաքական և հասարա-կական կյանքում կանանց և տղամարդկանց մասնակցու-թյան մասին հետազոտության իրականացում: | Կիրականացվի <Կանանց քաղաքական և քաղաքացիական մասնակցությունը 2012թ ԱԺ և ՏԻՄ ընտրություններում Լոռու մարզում> հետազոտու-թյունը, կամփոփվեն ար-դյունքները, կկազմակերպվի մարզային խորհրդաժողով հետազոտության արդյունքների ներկայացման և քննարկման համար: | ՀՀ Լոռու մարզպետարան | Մարզում գեն-դերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով | Հունվար | Օրենքով չարգելված այլ ֆինանսա-վորման աղբյուրներ | |
| 28. | Կանանց քաղաքական և քաղաքացիական լիդերության խթանմանն ուղղված միջոցառումների կազմակերպում: | Կկազմակերպվեն քառօրյա սեմինար-պարապմունքներ Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի կին համայնքի կին ղեկավարների և ավագանանիների համար: | ՀՀ Լոռու մարզպետարան | Մարզում գեն-դերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով | Փետրվար | Օրենքով չարգելված այլ ֆինանսա-վորման աղբյուրներ | |
| 29. | Մարզում գործող ձեռներեց-ների շրջանում գենդերային հիմնախնդիրների վերհան-մանը և գենդերային զգայ-նության բարձրացմանն ուղ-ղված միջոցառման իրակա-նացում: | Կանցկացվի “Սոցիալական գործընկերություն. ՀԿ, բիզնես ոլորտի կանայք և պետական կառույցներ: Քաղա-քացիական նախաձեռնությունների տեխնոլոգիաներ” թեմայով կլոր-սեղան քննարկում մարզի կին ձեռներեցների մասնակցությամբ: | ՀՀ Լոռու մարզպետարան | Մարզում գեն-դերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով | Հուլիս | Ֆինանսավո րում չի պահանջվում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 30. | Մարզխորհրդի նիստում ներկայացնել <Գենդերային հավասարության, ավանդական և արդի ընտանիքների սոցիալ-բարոյական հիմնախնդիրների մասին> և <Ընտանիքը և կանանց իրավունքները> թեմաները: | Հիմնախնդրի լուսաբանում և ՏԻՄ ներկայացուցիչների իրազեկուցման բարձրացում: | ՀՀ Կոտայքի մարզպետարան | Մարզում գեն-դերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով | 1-ին եռամսյակ, 3-րդ եռամսյակ | Ֆինանսավորում չի պահանջվում | |
| 31. | <Գենդերային փոխհարաբերությունների արտացոլումը հայ և այլ լեզուներում. համեմատական բնութագիր> թեմայով զրույցի կազմակերպում մանկավարժների և մշակութային հաստատությունների աշխատողների համար: | Գենդերային մշակույթի ձևավորման արմատավորման նպաստում: | ՀՀ Կոտայքի մարզպետարան | | 4-րդ եռամսյակ | Ֆինանսավորում չի պահանջվում | |
| 32. | Անապահովության գնահատման համակարգում ընդգրկված ցածր եկամուտով բազմազավակ ընտանիքների սոցիալական պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացում: | Բազմազավակ մայրերի սոցիալական վիճակի բարելավում: | ՀՀ Սյունիքի մարզպետարան | | Հուլիս-սեպտեմբեր | Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ | |
| 33. | Համայնքային ծրագրերում գենդերային բաղադրիչի ներդրմանն ուղղված միջոցառումների իրականցում: | Կկազմակերպվեն կլոր սեղաններ մարզի բոլոր համայնքներում և հաստատություններում մարզում գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ: | ՀՀ Վայոց ձորի մարզպետարան | | Մայիս-նոյեմբեր | Ֆինանսավորում չի պահանջվում | |
| 34. | Մարզային ենթակայության կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում (այդ | Մարզի տարածաշրջաններում կանցկացվեն 4 խորհրդակցություններ, որտեղ կքննարկվեն | ՀՀ Տավուշի մարզպետարան | Մարզում գեն-դերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով | Հուլիս-սեպտեմբեր | Ֆինանսավորում չի պահանջվում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | թվում՝ համայնքների ղեկա-վարների աշխատակազմե-րում) գենդերային քաղա-քականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում: | մարզում առկա գենդերային հիմնախնդիրները և դրանց լուծմանն ուղղված ծրագրերը: | | | | | |
| 35. | Կանանց առաջնորդության դերի բարձրացմանն ուղղված <<Լիդերության դպրոց>> ծրագրի իրականացում | Կկազմակերպվեն դասընթացներ 25 կանանց համար և կտրամադրվեն համապատասխան հավաստագրեր: | ՀՀ Շիրակի մարզպետարան | Մարզում գեն-դերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով | Ընթացքում | Ֆինանսավո րում չի պահանջվում | |
| 36. | Մարզի 5 տարածաշրջանի համայնքներում ավագանու անդամների համար դասընթացների կազմակերպում՝ գենդերային քաղաքականության թեմաներով: | Իրազեկվածության բարձրացում, գենդերային գիտելիքների ապահովում: | ՀՀ Շիրակի մարզպետարան | Մարզում գեն-դերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով | Ընթացքում | Օրենքով չարգելված այլ ֆինանսա-վորման աղբյուրներ | |
| 37. | Գենդերային քաղաքականության լուսաբանման նպատակով կազմակերպել կլոր սեղան-քննարկում ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով ծառայողների համար: | Ոստիկանության աշխատակիցների իրազեկության բարձրացում: | ՀՀ ոստիկանություն | | Ընթացքում | Ֆինանսավո րում չի պահանջվում | |